

1



Գոյկատենեց բայր Եւլընքի, միացի!

Վ. ՍՈՒՐԵՆ

ԱՐԱԿԱՆ - ՔԱՆԱԿԱՑԱԿԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

I -

I. ՆԵՕ - ՖՈՒՏՈՒՐԻԶՄ ԹԷ՝ ԳՐԱԵՑՈՐԾ-
ԿԱՆ ՊՈՒԶԻԸ.

II. «ՄՈՒՐՃ».

III ԵՎԻՆԵ ԶԱՐԵՒՅ.

Թ Ի Տ է Ի Ա

Ձ. Տ. Բ. Խ. Պոլիգրաֆ բանկի հրատ տպարան

1923

Изд. «САРО-МАРО» — Тифліս

Пролетарий всех стран, соединяйтесь!

Ե. ՍՈՒՐԵՆ

ԼԵՐԱՏՈՒՐНО - ԿՐԻΤԻԿԵՍԿԻԵ ՍՏԱՏЬИ

I

I. ՆԵՕ - ՓՈՒՏՈՒՐԻԶՄ ԻԼԻ ՊՐՈԼԵ-
ՏԱՐՍԿԱՅԱ ՊՈЭԶԻՅԱ?

II. «ՄՈՒՐՃ».

III. ԵԳԻՇԵ ՉԱՐԵՆԾ.

ՆԿԱՏՎԱԾ ՍԻԱԼՆԵՐ

Երես

ներբեիլից առկ

ովքի և լինիք

2

7-րդ

գետեղված և եղել

8

13-րդ

հայանապներ լինեն

**

**

մարտիսոսութեան ու-

զիոնի

(19)

30845.

"1 նըլից (1)

ապելիք ին որդու

10.

արակների) մհամ-

մասնութիւնը,

ո դարերում"



IPS. •URO-URO—ESTE

Учебник для учащихся средней школы по физике

B. Books

聽寫小學語文上 1961 年

ԳՐԱԿԱՆ - ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

91.39-1 ՀՈԴՎԱԾՆԵՐ

U-97

1

I Ակօ - Յօնիշտիքալ թէ՝ պրոլետարիատ-
ներն Պոլիցիալ.
II «Պլիքը».
III Եղիշե Զարենք.

C. L. B. & H. M.

Տ. Տ. Բ. Ա. Պալիստրաֆ բաժնի 5-րդ ուղարքն
1923

Изд. „САРО-МАРО“—Тифлус

Пролетарий всех стран, соединяйтесь!

E. C Y P E N

ИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИЕ СТАТЬИ

1

I. НЕО - ФУТУРИЗМ ИЛИ ПРОЛЕТАРСКАЯ ПОЭЗИЯ?

II. „Мурч“.

III. ЕГИШЕ ЧАРЕНЦ.

ИФЛИС

1923



Ե Ւ Ա Խ Խ Խ Ա Ս Շ

Ներկա գրքույթի մեջ նույնութեամբ արտադրոյված են շապկի վրա նշանակված այն երեք հողվաճները, վորոնցից երկուսը — անեռ-ֆուտուրիզմ թէ պրոլետարական պոեզիա» և Եղիշե Չարենց՝ «Գուգազուռնութ—տպագրվել են նախ Վրաստանի Պրոլետարական Ասսուխացիայի օրդան «Դարձնոց» ամսագլուրում, ապա ավելի լրիվ «Կարմիր Աստղ» օրաթերթում, իսկ երրորդը՝ գրախոսական Երեվանի Պրոետարական Գրողների «Մուլճ» պարբերականի մասին և եղել զետեղված «Կարմիր Աստղ»-ում:

Նրանք մի ներքին ամուղջութիւն են կազմում և նպաստում են պրոլետարական դրականութեամբ հետաքրքրվողներին պարզելու այն ուղիները, վորոնցով համենայն դեպք չպետք է ընթանալ, եթէ մենք կամենում ենք գիտակցարար ծառայած լինել բանվոր դասակարգի ազտատագրութեան գործին:

ՆԵՐ-ՖՈՒՏՈՒՐԻԶՄ ԹԷ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊՈԵԶԻԱ.

Համաշխառքային հասարակական - անտեսական ցնցումների մեջ գեղարվեստական սույղադադործող վորոյն բնականարար տեղի ավելյ այլ մտազբազմութների Պատերազմն ու նրա անմիջական հետեւաբները շատ մտքից և զգալիորեն շաշափեցին հասարակական բոլոր խավերի, ավելի ձիւմ կը լիներ առել՝ դատակարգերի անտեսական շահերը։ Մարդկանց շատ քիչ ժամանակ եր թողնվում գրական գրազմութների համար Լորդիցին բոլոր ուժները՝ նախ արիւն և ավել սփեր սփեր։ Հորս կողմը, տպա մի կերպ բուժելու այդ ամերածութեան հետեւաբները, մի կերպ վերականութներու չորս հինգ տարիւմ ընթացրում վոչնչացված նիւթական որոշեքները։

Այդ համաշխառքային ռեակցիայի տարիներին գեղարվեստն ապրում եր անկրան չեշտված շրջան։

Կուրութիւնը աիրել եր վոչ միայն քաղաքական ասպարեզին։ Գեղարվեստական միաքը իր ամբողջութեամբ ծառայութեան եր մասել մարտական շավինիզմն և սուանձնել եր նվաճողական կազմակալվածմի թրմականարի պաշտան։ Միայն բացատիկ զեմքեր—վորպիսիք են ֆրանսիական գրադներ Անտոնի Ֆրանսը, Հանրի Բարբիւսը, Խոմենս Խոլանը—կարողացան այդ կատաղի հսաներին զեմ կանգնել, չըարվել ընդհանուր արքեցումի, հեռու մնալ կարծես տարերային ժիարից։ Չուր չե, զոր այդ երբորդութեան անդամներից մեկը— Խոմենս Խոլանը իր պատերազմական շրջանի հրատա-

բակախոսական ժողովածուն հենց այդպես էլ անվանել եր.

— Բաւծուս քմելք...

— Ժխորից վեր...

Դրական-գեղարվեստական մոքի անկումը շատ ավելի մեծ եր, քան կարող են կարծել կողմանակի դիտողները Այդ անկումը պիտակիցվում եր ժամանակականից դրական խոշոր դիմքերի կողմից: Էմիլ Վերհարնը—քանիքորդ դարու առաջին քառորդի հակա գրիչը, վորթ առաջ լիժունում և Դանտեի բանաստեղծական հաճախարը—ինքն իսկ խոստովանում եր, վոր շրջապատզ ընդհանուր խավարի միջ նրան չի հաջողվամ պահել իր հին դիրքերը: 19 6 թվին, իր եղեռնակամ մահվան նախորհակին, պատեր՝ զմական շրջանի բանաստեղծութիւնների ժողովածիլի հառաջարանում բառացի սուլամ

— Ես զգում եմ, վոր իմ ներկա գործը անցած ու ործերիցս ցածր է. բայց ժամանակի տուրքն է այն...

* * *

Իր պրոգրեսիվ էութիւնը կորցրած հղիացած հաւաքականագի վերջին զբական արտայայտիչը ֆուտուրիզմն եր:

Պատերազմն ընդհատեց նրա զարգացումը, բաժանեց նրա էվոլյուցիան երկու էտապների՝ մինչ—պատերազմական և հետ-պատերազմական: Պրոլետարական դրականութեան ներկա՝ դրութիւնը պարզ պատերացնելու համար՝ շատ կարևոր և ծանոթ լինել ֆուտուրիզմի էութեանը և նրա այն երկու էտապների հետ, վորոնցից ռոաջինը պատեկանում և անցեալին, իսկ երկրորդը դեռևս ազգում և, ուրեմն և չի կարող մեր ու ազգութիւնը չը դրավել՝ քանի վոր զբական հրապարակում՝ եթէ վոչ նվրոպայում, զոհէ Խորհրդացին Ռուսաստանում—նաև է տիրող հոսանքը:

Ի՞նչ և ֆուտուրիզմը իր ակդրնական շրջանում՝ ժամանակի ու միջավայրի արտացոլումն, ինպիս ամեն մի զբականութիւն:

Մինչ - պատերազմական լրջանում կտպիտավումը վերջին տաօնամեակին արել եր հսկայական քայլեր և Արևմտեան Եվրոպայում հասել եր իր զարգացման պաղաթնակետին։ Նա ստեղծել էր արդի Փարիզը, Բերլինը, Լոնդոնը, Վիեննան ու Միլանը, և հենց այդ ինդուստրիալ խոշոր կենտրոնների տիրող դասակարգի ապրութների գեղարվեստական արձանագրովը — ֆուտուրիզմն եր։ Ֆուտուրիստները — վորովն ճշտապահ քարտուղարներ, ժամանակակից բուրժուազիայի — զրի էին առնում գործարանների, ճախարակների պտույտի արագութիւնը, «ամբոխների» (պրոլետարիատը սոսկ տմբոխ է նրանց համար) ժխորը, պատերազմի կենսարար նշանակութիւնը, պուլեմենտի տրա-տո-տա-տան, բոմբայի բում-բումը, բուրժուազիային անցած հնագարեան ֆեոդալական ապարանքների գեղեցկութիւնը, սվաստմորիլի — վոչ այն սոզացող վողորմելի ֆորդերի, այլ 120—150 ձիու ույժ ունեցող և մի ժամում 150—200 կիլոմետր արագութիւն լարող օտոների վազը, նրանց հանդիպումը, նախազգուշացնող սուլոցը ևայն, ևայն Ահա կուլտուրական Եվրոպայի ծոցում ծնված ֆուտուրիզմը, վորի անպայման տաղանդավոր ներկայացուցիչն եր Մարինետին։

Ֆուտուրիզմը ռուսունկ միջավայրի, գիւղական մթնոլորաի ծնունդ չի եղել և վոչ էլ զավառական զեղածիծաղ ու անազմուկ քաղաքների։ Նա սկիզբն և առել և Մարինետինիր դրական ստեղծագործութիւնը սկսել և Փարիզում, վորտեղ գործարանային ծխնելույզի կողքին ժամանակակից կապիտալը ժամանցի այնքան հզփացած անկիւններ ունի ստեղծած։

Բուրժուան շատ հաճախ ձանձրանում է քավականութիւնների ծովում, նրա զգայարանները բթանում են, նրա զգացողութեան անմիջականութիւնը թուլանում նրան հարկավոր են ուժեղ ցնցումներ, արտասովոր տեսարաններ, և ֆուտուրիզմը մեղ տալիս է պոնդիայի թե մուզիկայի մեջ այդ տրամադրութիւնները Մարինետին քալկանեան պատերազմի ժամանակ բոլղարական քանակում կովում և թիւրքական քանակի դեմ վաշ թե նրա համար, վոր նա առանձ-

նապես սիրում և բարգարին կամ առում թիւքքին, ոյլ գորովհետով պատերազմական կեանքը ստեղծում և նոր, «թարմ» առանութերա, արտաստվոր միջավայր, վորտեղ նրա թթացած զգայարանները ցնցվում եին ուշտասովոր տեսարաններից ու աղբումներից։ Նույնը և մաւզիկայի մեջ՝ մաւառուրիստ կոմպոզիտոր Ռուսոսի ստեղծագործութեան մեջ սիրապետող նոսան թափանցող ձայներն եին կամ ցնցող դոնդեր - հարվածները, վորովհետեւ նաև աշխատաւմ եր առշեցուցիչ հարգածներով արքնացնել նեկատորի ու նիկոսինի թույնից թմբած օրդանիդմները։

Ճաւառութեղմբ մինչպատերազմական շրջանում արվեստի ամեն ձիւղում — որուզիայի, մուզիկայի, նըկարչութեան, քանդակագործութեան մեջ — նույն այդ եթե կուզեք՝ Փինոնակական կապիտալի դրական ձառապայթումն և եղել։

Դժբախտաբար ժամանակի սղութիւնը մեզ թույր չի առալիս զետապ անալիզի հնմթարկելու ֆուտուրիզմի այլ առաջին էտապը։ Բայց այսանդ պետք և շեշտենք, վոր նա՞ով ծանոթ է հիմասկալան ֆուտուրիզմի հետ, նրա համար վիճելի չողիսի լինեն մեր պնդումները։



Բայց նախքան ֆուտուրիզմի հետ-պատերազմական էտապի մասին խոսելը, մենք կը ցանկանայինք մի-երկու բառ առել ուստական ֆուտուրիզմի առթիվ, վորովհետեւ այս շարժումը շատ ավելի և ծանոթ մշականից շատերին։

Միանգամայն սխալ կը լիներ ուստական մինչպատերազմական ֆուտուրիզմի ոլրիզմայի միջով դուդափար կազմել նրամուկան եվրոպայի ֆուտուրիստական շարժման մասին եթե ֆուտուրիզմը եվրազյան արգեն իր խմառաք կորցնազ ամբապետող զառակարգի հղուցումի ու հոգնածութեան, շվայտութեան ու սանձարձակ բավականութիւնների գեղարվեստական ֆիքսացիսն եր, մեզ մաս - Բուստումանում՝ վորտեղ կապիտալիզմը ընդհանրապես շատ

Յուլյ եր և բուրժուական դասակարգը անզոր (այն-քան անզոր՝ վոր ցարական ռեժիմի, պոմեշչիկ-ազնվա-կան կառավարութեան տապալումից հետո նա հազիվ կարողացավ միայն մի երկու ամիս մնալ կառավա-րութեան ովուն և երկրի ղեկը զիջեց նախ մանր-բուրժուականին և ապա պրոլետարքատին) — ֆուլու-րիզմը իր վառքի տակ չդառավ հարկավոր ամուր հողը և սկսեց խորթանալ եվրոպական ֆուլուրիզմից, — վորից նա վերցրել եր սկզբում թե ձեզ և թե քրո-պանդակութիւնը, — մինչեւ վոր մեծը միւսին անձա-նաչելի դարձան Հայտնի ե, վոր երբ 1914 թվականի սկզբին — եթե չեմ սիալվում հունվարին — Մարինետ-տին Ռուսաստան եկավ, նա հրաժարվեց իր այլան-դակ ուսա հետևորդներից և վերջիններս էլ բայկուի Ենթարկեցին իրենց ուսուցչին: Սա մի սոսկ ուսատա-հականութիւն չեր ի հարկե և վոչ էլ անձնուկան հա-շրիւների արքիւնք: Ֆուլուրիզմը Արևմտեան Եվրո-պայից ընկնելով տնտեսական զարդարման շատ ավելի ստոր տատիճանի կանոնած Ռուսաստանը, ստիլված եր հազնել այն տարազը և մարմնացնել այն բովան-դակութիւնը, վոր նրան առաջարրում եին ուսական շրջապատն ու հասարակական զարգացումը: Եվ եթե հաջողվում եր հաճախ վրան առնել փարիզեան տա-րազը նրա տակ դժվար եր լինում ծածկել կապիտա-լիզացիայի չենթարկված, ելեկտրականութեան ու մե-քենայի հներգիայից չակոսված կիսանահապետական-գիւղացիական երկրի էռեթիւնը: Ֆուլուրիզմը Ռու-ստանում իր առաջին էտապին՝ կորցրեց իր իմաս-տը, րայոն ճ'եր-ը և նրանցից մնաց միայն արտա-քին կեզեր, վորը հաճախ ծիծաղ եր շարժում:

Ռուսական ֆուլուրիզմը, կորվելով իր ելակե-տից — Արևմտեան Եվրոպայի նույնանուն գրական շարժումից — և տեղումն էլ չունենալով խոր արմատ-ներ դցնելու հսարավորութիւններ, նա այլասեռից մինչև գրական «սլավիանոֆիլական» շարժում, վորի մեջ ֆուլուրիստականը՝ եթե կուզեր միայն արտաքին ձևն եր և այն էլ վոչ ամբողջովին:

Սակայն մի կողմը թսդնենք ուսական ֆու-

առւրիզմի սլավիանոֆիլականութիւնը, վոր առանձիւ ուսումնասիրութեան հետաքրիք նիւթ և և մեզ կարգ և շատ հետուն տանել, եթե փորձենք նրա վրա ծանրանալ: Անցնենք ավելի շուտ ֆուտուրիզմի հետպատկերազմական էտապին:

* * *

Ֆուտուրիզմը Եվրոպայում այսոր անցած - առրած մի գրական շարժում և, վորին դժվար թե կարգանա հարսւթիւն առլ իր վերջին օրերն ապրող հին իրավակարգը:

Պատերազմը խոշոր հարվածներ տվեց կապիտալիստական աշխարհին. նրա անդորրութիւնը խանգարված և, նրա ֆինանսական բարեկեցութիւնը վըտանգված, տնտեսական հավաստրակշռութիւնը խախագած: Պատերազմից հազինող թե պարտված զուրս եկած ժողովուրդների աշխատավոր զառակարգերն արթնացած՝ հեղափախութիւններ են անում, առավալում թագակիրներ և ջտխջախում գաներ, զրայում են զավողներ ու ֆորբիլաներ, այցում են զղեակներ ու պալատներ: Այլնիս կապիտալիզմի մեծութիւնն ամանավանդ վեհութիւնը երդելու ժամանակներն անցել են, և դժվար թե այժմ հին իրավակարգի սքանչելիութեանը հավատացողներ ու մանավանդ հավանակներ ինեն: Բնական և, վոր ֆուտուրիզմը Արեվմտեան Եվրոպայում սկսոք և մարեր, հանգչեր իր բնակուն մահով: Եվ այդպիս ել կատարվում է այնուելու նու հարձակողական դիրքերից անցել էր պաշտպանութեանի, իսկ այսոր վորքան կարելի է դատել մեր ձեռքի տակ եղած և մեզ հանուզ աեզեկութիւններից — ֆուտուրիզմը չի շարժում այլիս վոչ վորի հետաքրքրութիւնը:

Այլ բան և կատարվում մեզ մոտ — Ռուսաստանում և վորպես արձագանք Մոսկվայի՝ նրա նույնիսկ հետագար ու հետամնաց ծայրամասերում, օրինակ Երեվանում: Այսուել ֆուտուրիզմը շարժել և շատերին բանաստեղծական թժրութիւնից: Ախալ կը լիներ բա-

ցաւրել այն միայն նրանով, թե Եգրողոյից մոզան, Նորածնութիւնը մինչև մեղ համելը պահանջում է լորոշ ժամանակ, թե Փարփառում հնացած ուարագը՝ մեղանում գետես շատ «մողնի» և համարվում: Այդպիսի որամարմութիւնը անթալլուրելի պարզաբանութեան ապացույց կը լիներ, երբ Մոսկվայի ու Շերլինի մեջ ահրողլանային հաղորդակցութիւն կա:

Աեզզիստ զատազութիւններով չի կարելի բավարանանայ հասարակական երեւյթների պատճառներն ուսումնառութիւնն:

Մեզ թվում է, վոր Փուտուրիդմի արթնացումը Հոկտեմբերեան Ռուսաստանում հետ-պատերազմական շրջանում նույնքան բնական է ու հասկանալի, վորքոն նրա մարումը Արևմտեան Եվրոպայում: Խնդիրը նրանում է, վոր արտադրական միջոցների զարգացումը և կինարոնացումը ամբողջ թափով Ռուսաստանում կատարվում է միայն այժմ, երբ իշխանութեան գյուվա է անցել քանիոր զատակարգի և շքալոր զիւդացութեան կուսակցութիւնը:

Ընկեր Լինինը շատ ճիշտ կերպով նկատել և մի քոնի անգում, վոր մեր Հոկտեմբերեան հեղաշընման անպայման զրական կողմերից մեկն էլ այն է, վոր նույնից Ռուսաստանին այն ամենը, ինչ կարող եր տայ ամենառաջիկալ բուրժուական-գեմոնկրատական հեղափոխութիւնը՝ այն տարրերութեամբ միայն, վոր մեր չեռորհիվ այդ նվաճումները շատ ավելի հիմնականորեն են խրցցված երկրի կողմից, քան եթէ կատարվեին այլ պարագաներում: Պետական կապիտալիզմը արտադրական միջոցների կագարելութիւնը հասցնում է կամ, Ռուսաստանի համար ավելի ճիշտ կը լիներ ասել՝ ձգում և հացնել այնպիսի չափերի, վորպիսին չի խմանալու Եվրոպան: Արտադրական միջոցների այս հորսուցման և կրկնառատկման պրոցեսում, երբ Խորհրդային երկիրը փորձում և վորքան կարելի և արագորեն. Էլեկտրոֆիկացիայի անցնել, — ուստական Փուտուրիզմը ահմանում է հենց այն, և միմիայն այն՝ ինչ նրան պակասում եր իր զարգացման առաջին, նորիտազատերազմական շրջանին: Եվ նո փորձում և

վայր ձգել . իր սրակեանովիլական տարազը, մասսամբ էլ սլավեանովիլութեան շաղախով երգել՝ ծըի-նելույզը գործարանի, ողակները ջուլհակի, ամբոխ-ները և օտան ու օտան Մարինեատիի ամբողջ տասն տարի առաջ երգած այնքան տպակերավոր Ա/120-ը...

Բուրժուական Եվրոպայում, արթնացող և դասա-կարգային պիտակլցութեան եկող պրոլետարիատը իր դաշտույթին և կենտրոնացրել հակառակ դասակարգի շահագործման կենտրոն գործարանի վրա, և պրոլե-տարիատի գրոհի առաջ լոել են կապիտալիզմի շվայտ քմահաճույքի սքանչացողները, Մեղ մատ—Ռուսաս-տանում բանվոր դասակարգը իր ույժերն և լարում վատրի կանգնեցնելու իրեն պատկանող գործարաննե-րը, վորոնք այսոր ընդհանուրի սիրո ու դգվանքի ա-ռարկա են, և ուստական ֆուտուրիստները՝ տանց թափանցելու տնտեսական այդ նոր պրացեսի ամբողջ իմաստը՝ իրենց գոգավորութեան ազբիւրն են դարձրել այդ պրոցեսի ձեզակունը:

Ահա մի երկու խոսքով արդի ուստական ֆու-տուրիզմի տնտեսական բազիսը, նրա արթնացումի դասաճաները:

Հաստ հասկանալի պիտի լինի, ուրեմն, թէ ինչն գետելո շատերի համար,—վորոնք ծանոթ չեն Եվրո-պական ֆուտուրիզմի զարգացման ու ծագման էստու-ների հետ, և պարզ չեն պատկերացնում, թէ վճռ-պիտի ֆակտորներ ժամանակավորապես հարութիւն են առիթ ֆուտուրիզմին մեղանում,—անհասկանալի և գրական այն ոլրոցեալ, վոր ապրում ենք մենք հե-դափոխական ու պրոլետարական թուսատանում:

ԶԵ վոր մեր ֆուտուրիստները երգում են գոր-ծարաններ, ամբոխներ, օտոմոքիլ, պուլեմենու և այլն Աւրեմն, Նրանք «մԵրն» Ան...

Պրոլետարական երգիչներ...

Վ.Հ. ուստական ֆուտուրիստները—Երեկիա Ա-րեվման Եվրոպայի երամից հետ մնացած երգիշ-ներն են, վորոնք մեր պետական կապիտալիզմի ըս-կդրնական էտապում ուզում են ահանել, և ահա-

նում են իրազես այն օգնությունը, վորոնք մնացել են ֆուտուրիզմը Նվրազայաւմ:

Բայց Հոկտեմբերեան հեղափոխութեան բայց դուրս եկած իրավակարդը հավասար չտիտիվ էր հիմունքակեցնիք թէ շահագործող դասակարգին և թէ այդ դասակարգի վերջին երդիչներին, և կազացացի—երեսի վճշտման ուշ ապագայում, վոր պետական կառավագիլիզմը՝ ընալ իրենց կարծած կառավագիլի թաղավորութիւնը չե, ինչպես և իրենց պոեմների մերժամանակակից լեբարիկոնով համեմած բանաստեղծութիւնները՝ ուրութառիտատի երգեր:

* * *

Հողվածո երկարեց հակառակ իմ կամքի: Բայց պետքու այնքան առելիքներ կան և այնքան անհրաժեշտ ե, վոր առվեն... Վարպետի մի վոքը ցըմի այն պեկաղինառական որբեցումը, վոր տիրում և այսպես կոչված՝ հայ պրոլետարական դրականութեան մեջ և առեղծվի առողջ մթնոլորտ ու մոռեցում դեպի գրական խնդիրները: ԶԵ վոր այդ առողջ մոռեցումից և կափած պրոլետարական պուղիային չեմ ասի ապագան—նա ապահովված ե—այլ կունմ զարկոցման դիգագները, այդ զարգացման հապազումն ու արագացումը:

Ես կուզեի մի երկու խոռոք ել տոել մեր, «հայկական» ֆուտուրիզմի մասին:

— Ի՞նչպիս, Կարս-Դամբիշիշի մասին...

Վաշ, Կարս-Դամբիշը պատմութիւն ե, նու այլեվս զինամելիու չե, ինչպես սիրում և որուանայտին այդ հայ կլասիկ ֆուտուրիստը: Աւզում ենք կանգ առնել մեր նեռ-ֆուտուրիզմի մասին, վոր ոչոր հրամցվում ե՝ անշուշտ անդխառակցարար՝ «պրոլետարական» արվեստի անվան տակ:

Այդ ֆալսիֆիկացիան վերին տսախանի լինուակար և մեր բանվորական բանաստեղծութեան ձեռներարման ու հասագինութեան համար, վորովհետեւ նու փաթաթում և մեր ոկտոնակ պոհուանվարների զրշին արգեն վորոնված ձեզներ և կիղծ պատկերներ, ամբողջապես փոխառված ռոտր արտենալից:

Բայց նախ օրիգինալի մասին:

Արդի հայ նորագույն բանաստեղծների մայեստրոն, կարելի և առանց սխալիքության ովանդնել, ուստական մեծ ֆուստուրիստ Մայիսակովսկին և Հանճարեզ Լենինը, ինչպես և հասարակ մահկանացու ընթերցողը հավասար շափով կուշտ ծիծաղում են, երբ կարդում են Մայիսակովսկու ժամանելիքակից կեսոնքի անթիվ վառ պատկերները: Բայց հաճույքով կարգալով հանդերձ այդ անպայման տաղանդավոր բանաստեղծի, օրինակ, „Прозаседавшиеся“ շարժը, ընկեր Լենինը—վորի մեջ միշտ էլ խոսել է նախ և առաջ բանվոր դասակարգի առողջ բնազդը—չի մոռանում նկատել, վոր Մայիսակովսկին մեր դասակարգի երգինը չե:

— Բայց ես Մայիսակովսկու տաղանդի երկրպաղուներից չեմ:

Մուսական ֆուստուրիզմը ունի այլ հայտնի առունենք, բայց Մայիսակովսկին իշխում և բոլորի վրա իր տաղանդի մեծութեամբ:

Եթէ աչքի անցնենք այսոր հայ թերթերում լույս տեսնող բանաստեղծների, այսպես կոչված «լրացնաւրական բանաստեղծների»^{*)} արտադրութիւնները՝ կադիս Տիգրան Հախումենինի նեյնիմներից «Խորհրդային Հայաստանում»՝ մինչև «պրոլետարական» բանաստեղծ Ազատ-Վշտունու Վերինական քամիները Աստաֆեան գողոցի (ֆրանցուսկու Նիյегորոդսկու),— ինարկ եռանց մոռանալու շնորհալի բանվոր Ալազանինին ու Զարենցի ավատան՝ թեկուզ բոսոր, կը տեսնենք, վոր այդ բոլորի մեջ չափազանց մեծ, ուղղուելի կամ անուղղակի ներշնչում կա ուստական պահպիայից, ինչ—չեշտում ենք—դրական երեւոյթ է: Սակայն չտփաղանց ստրկարեն է ընդուրինակումը ձեւների, պատ-

*) Պրոլետարական բանաստեղծութիւն և ծագումով պրոլետար-բանաստեղծ համանիշ հանկացողութիւններ չեն. բանվոր կամ առաջնորդ ենի տարաբինակ «աշխատավոր» (երեսի ևնթուրիցում է «խորհրդային ժառայող») ածականները պահաների անուններն կցված՝ դեռևս լուրջ գարանտիա չեն, մե գոտանավորը կամ պատմածութեը ազատավարդութ է, մանր-բուրժուատական մատեղամբից, մեջանական բնույթից:

կերների և նույնիսկ բառերի ֆուտուրիստական, և շատ հեռավոր աղդակցութիւն խկազեռ ուստական պրոետարական պունտների՝ վրապիտիքն են, օրինակ, Կիրիլով, Սագոֆիևը, Սամորիտնիկ և միւսները:

Միջակութիւնների մասին չը խօսենք. վերցնենք բանաստեղծ Զարենցիս Սա կատարեալ հայ Մայեակովուլին և, վերջինիս տաղանդավոր թարգմանը, վոր իր ուժեղ կնիքն և զրել միւս բոլոր հայ երիտասարդ բանաստեղծների վրա Թերթեցեք Զարենցի վերջին «Պուզովուանա» տետրակը և զաեր այնանդ մի հասրել բանաստեղծութիւն, վորից խկազեռ պրոլետարիատի պատկարդային գիտակցութեան համ բուրի Նույնիսկ այն կոտրներում, վորաեղ Զարենցը, կորցնելով ճաշակի և մոռի համաստարակշռութիւնը, արդին վոշին և երդում կամ իր քէթի ծայրին բուսած բարելոննեան տշտարակը—այդ դեպքում խակ ամեն ինչ կա, բացի պրոլետարական պոնզիայի էլեմենտներից:

Սխալ և կարծել, վոր եթէ մի վոտանավոր նվիրվում և կոմմունիստ Դրաստամատին կամնրա մեջ հիշատակվում և ե. կ. (Երևանի կոմիտեն), նկարագրվում և Աստաֆիեն մրոզոցը կամ ցուցադրվում Ժեն-օտղելում պատառած մի օրինուդ, վորի աշքերը փայլուն կամ «հղի» են, — դրանով կարող և պոեզիան պրոլետարական գառնալը Ապրումներն են, վոր պիտի լինեն ոլորդեատրական: Տալիս և արգելոք պոնտը—լինի նա բնակելիքնատ թէ պրոլետար—բանվոր գասակարգին հուրովար ապրումներ:

Մայեակովսկին, ինչպես և նրա շնորհալի հետեւ վորդ Զարենցը, այդ և վոր չեն ուայիս մեզ նույնիսկ ոյն դեպքում, երբ անցնում են Աստաֆիեն կամ Մայովայա ֆուզոցներով՝ թեկուզ կուսակցական շնորի կալրով շատ, շատ մոտ... Վարովնետե նրանք չեն ապրում պիտակից բանվարութեան զատակարգային դոյտմարախ հոգերանութեամբ, այլ մեծ իրազարձի միայն ֆանֆարին (թմբակացին) եփեկառով:

Հենց այդ ֆանֆարային եփեկար անսակեալց շատ բնորոշ և այն հանգամանքը, վոր ասիսկան դորձիքների մեջ Մայեակովսկու աշակերտը պերագառու-

թիւն և տվել վոչ թե՝ օրինակ՝ քաղցրահնչիւն՝ քեմ-
մանչին կամ բազմահռոյդ թուրին (մենք ընդհանրապես
եվրապական սիմֆոնիային հավատացողներից ենք), այլ ազմկող գուրնա-դհոլին, վարսոց վայրենի փշոցը և բը-
թացնող մանուռն հարգածները կարող են այնքան շրջ-
մացնել մարդու «զանգի դհոլը», վար նու «բուռք արեիս-
տեղը ընդունի մի տիւմար գոււնաչու շիկացած-հար-
բած զեմքը»:

Միթե խկացես ավելի աղուշ արտահայտութիւն
կարելի է երեսակացի՝ քան այսերը փքած, քիթը ար-
հասական ուսուցքի մեջ կորած, աչքերը գուրս թա-
փած, հիւանգուս կարմրութեամբ ներկված մի զունա-
չու երես...

Մի անգամ բնողմիշտ պետք է խրացնեն մեր
պրոլետարական պրոդները, վար նայիւրին երազկառ եր-
ենակամարի տակ՝ վորտեղ չորքառանիների մեջքի
ողիրամիզաձել աշտարակների ոիթմիկ պարը
քաղցրություն չոյտմ է մեր պուռաների ապագորիչ
հայեացքը—երբեմ չի կարող նոր սուսվոս ծագել՝ քա-
նի այդ երկիրը կը մնա «նայերիս» և քանի նրա գա-
զափարախոսը, ցլատագն-ը կը լինի մի աղուշ զաւ-
նուշի:

Նոր իրավակարչութեամբ երգիչները մահ են ըե-
րանմ երանավետ նայիրեան մթնոլորտին...



Այս կամ այն բանաստեղծի աեղը վորոշելիս,
մենք ի հարկե չենք կարող դեկապարմել նրա անհատա-
կան դեկլարացիաներով՝ կամ համակրութեամբ՝ Մայեա-
կավակին 1920 թվին, և զետ տուո՞, հազարավոր ուն-
կադիրների ներկացութեամբ՝ երբ նրան ակնարկում էին,
թե նո ֆուտուրիստ, որեւէ զայրացած պատասխա-
նում եր.

— Վոչ, ես ֆուտուրիստ չեմ ևս որովհատրական
պուռա եմ...

Եվ նո բանաստեղծական գեղեցիկ թոփչք եր ա-
նում Հոկտեմբերեան հեղափոխութեան գիրկը աղացու-

ցելու, թե վճրքան նրա սրաբն մոտ և այն նոր հասարակակարգը, վոր շաբթել և միջնուները և պատուի նախարաշարութեանը ու կեղծիքի քողը Այդ անկնդժուատական խոստավանութիւնը վոչ վոքի չընաժողեց, վոչ թէ նրա համար, վոր ողուոր կեղծում էր կամ սառւմ (Մայեակովսկին շատ իրար առջանգ է և նա կարիք չունի կեղծելու), այլ վարովնեան ողուոր հայուարարութեանը սուսպիւմ եին նրա արտապրած ստեղծագործութիւններով:

Նույնը մենք կարող ենք ասել Մայեակովսկու աշակերտների—մեր հայ երիտասարդ՝ բանաստեղծների մասին:

Նատ մեծ համարձակութիւն և հարկավոր «Եռութիւ» խմբագիր Ազատ Վշտունու վառանսովորների մեջ վորեն պլոտեատարական շեշտ տեսնելու։ Նրա մեջ ոիրողը՝ բանաստեղծութեան անկման շրջանի դեկադենտական ատիլն է։ Այսանոց բացակայում և Մայեակովսկու հետեւրդների թարմութիւնն անպատճառ է։

Մի այլ օժաված ողուած Հակոել Այգագեան «Կարմիր Աստղում» երգում և բաղաքի ոզմուկը, ավտոի ուրոցը, փողոցի ժխորը, վորոնց առաջ նա պատրաստ և բացել իր մենութեան («իսուցի») դոները։ Բակավես վոր Այգագեանը ինտելիգենտական մենութեան ոնորոց ապրումների մեջ և խարիսխում և եթե նա ձեղուում և սենեակից քաղաք ընկնել՝ ի հարկէ այդ դեռ չի նշանակում, թէ նրան հաջողվում և խորապես ընկնել քաղաքի այն թաղը՝ վորտիզ և մայթերու։ Վրա մաստաների դաստիարակացին գիտակցական կեանը կա։ Մեղ թիվում և — հակուակ գուցե իր ցանկութեան՝ բանաստեղծը իր երգերի մեջ ավելի շատ Գոլովինսկի պրոսպեկտի կարուն և քաշում քան պատմական նախալովկայի արխինաներկ ու զեսորի ծխով ծածկված փողոցներինը։

Զարենցի «մարքսիստական» երգումները մեզ նույնպես չեն երաշխավորում, թէ նրա հանդուպն պրիչը՝ Իվանը վոխարինելով Հաղոյով, կամ Տոմբովը՝ Շիթլիսով, կամ արեւը անսպայման բոսոր եկ ավտոն էլ նույնպես այնպայման բոսոր (վերջ և

վերջո չափազանց սահմանափակ բառակույցի ու պատկերների մոնուան կը կնութիւնը է և Մայեակովսկի) իր մեջ և պարիսիակում բանվոր դասակարգի ստեղծագործող հանձարի բաղմաղիսի մեծութիւնը:

Եսա հետաքրքիր աշխատանքը կը լիներ վերցնել վերջին, հետ-պատերազմական շրջանի սուսական ֆուտուրիզմ և պարզել նրա ազդեցութեան չափը Զարենցի ու նրա հետեւորգուրի վրա. Ինձ մեկից ազելի անգամներ պատահել է հանգիստի զարմանալի զուգագիրութիւնների: Այս մենք փորուս բացասական երկույթ չենք չեցաւմ, սուսական զրականութեան ազդեցութիւնն ընդհանրապես բարերար և եղել մեզ համար, և ֆուտուրիստական հանգստութիւնն արգեն սովորել և մերսնց թոթափիեւ հնութեան շատ փոշիներ և փորուսների—պրաբունքների ուղին բանել: Այլ դիտելու, վոր ազդեցութեան կապը չափազանց սիրու և որդի ուսու և հայ ֆուտուրիզմի մեջն և շատ մակերեւույթային պրոլետարական պահցիայի մեջ: Բայց թողնենք ազդեցութիւնների խնդիրը:

Մի ուրիշ հարց եկո պետք է լուծել, եթե մենք ուզում ենք բնա զա րօգ, այն է—ի՞նչ ենք հասկունում պրոլետարական պահցիս բառերի տակ: Առանց այս հարցին ես պատասխանելու լրիվ ու հիմնավորապես, մենք չենք կարող փորոշել այն պիրքերը, վորոնք պարապիր են բանվոր դասակարգի երգիչների համար:

Բավական չե ազգացուցել, թե ֆուտուրիզմը բանվորացարկի պահցիս չե: Պետք և տակ նույնարձ, թե վորոնք են ուրեմն պրոլետարական զրական ստեղծագործութեան առանձնահատուկ էլեմենտները:

Այդ բանը մենք կաշիսատենք անել մի անգամ:

Ա Ր Ա Բ Ի Ք Ճ

Դաշտան-գեղարվիսական-Ընտադատական պարբերական
Երեխան—1922—№ 1.

A Ա 3/93

Հոկտեմբերեան հեղափոխութիւնը կերպարանա-
կոխեց մեր պատկերը վոչ միայն տնտեսա-քազարա-
կանապես, այլև հեղաշրջեց մեր պահանջները կու-
տուրական բոլոր տաղարեզներում։ Շահագործող պա-
սակարգին հաջորդող տպատագրված նոր գասակարգը
հավաենութիւն ունի ստեղծելու նոր արժեքներ կետնքի
բոլոր ճիշգերում, եթ այդ տեսակիներից բացառութիւն
չի կազմում ու չի կարող կազմել դրականութիւնն ու
զեղարվեստը։

Հին գրականութիւնը փաստապես այլիվս դայսւ-
թիւն չունի հրապարակում։ Գրական ստեղծագործու-
թեան հին բավանդակութիւնը, հին պատկերները, հին
ձևերը այլիվս չեն բավարարում վոչ վրի։ Եղ ընտ-
կան և միանգամայն, վոր ճանաչված հրեկվա գրական
մեծութիւնները կամ լսել են, եթ կամ նրանց արտա-
դրութիւնները վորակվում են վորպես անցեալի արձա-
դանքներ, երբեմն նույնիսկ հականեղափոխական մաքի
արտացոլումներ։ Շանթի «Շղթայվածը» գրական գատի
ժամանակ իրավամք վորակվեց հակա-հեղափոխական
մարի արդիւնք։

Պրոլետարիատը կոմուն և իր գրականութիւնն
ու գեղարվեստը, եթ եթե այսոր հայտնի չեն դեսկվո-
թե ինչ վերջական ձեվակերպումներ կընդունեն նրա
այդ վորոնումները գրական՝ ինչպես եթ միւս առ-
պարեզներում—քաղաքական թե տնտեսական, համե-

Նոյն պես նըս համար միանգամայն պարզ են . ոյն նպատակները, վոր նա հետապնդելու և նաև որական-գեղարվեստական շրջանակներում:

Խորհրդացին Ռուսաստանում ոկտիել և մի հռեմկու գրական հոսանք, նորից արթնացն հետաքրքրութիւնը գեղի գեղարվեստը, վոր կարծես մարմել եր պատերազմի ու քաղաքացիական բուն կոխիների ժամանակ:

Պրոլետարական գրականագիտութերը, վորոնք երեկ գրչի փոխարին զենք երն վերցրել իրենց ձեռքը, այսոր դարձել են իրենց սիրված աշխատաքին ու փորձում են ընդհանուր շինարարութեան մեջ իրենց վերաբանված շենքը բարձրացնել:

Այդ դրական շարժմանը թնկի մի փոքր ուշ, բայց իրովանն մասնակից և լինում նաև մեր Անդրկովկասը:

Մի քանի ամիս առաջ Թիֆլիսում մեր հայունի որում Հակոբ Հակոբեանի խմբագրութեամբ լույս տեսավ պրոլետարական դրական-գեղարվեստական ամսագիր «Դարբնոցը» (Երկրորդ համարը դաւրս եկավ մաս օրերս). այժմ էլ երեվանում մի ուրիշ ոլոկա Ազատ Վշտունու խմբագրութեամբ հրապարակ և գալիս «Մուրձը» նույն պրոլետարական գրականութեան զարկ աված լինելու համար: Աւախալի երեվույթ, վոր չի կարող չողջունվել բանվոր գասակարգի զատին և վիրաված ամեն մի անդամի կողմից:

«Մուրձը»—ասում ե քնկ. Ազատ Վշտունին իր առաջին հոդվածում՝ ընթանալու և «աշխատավորական-գասակարգույթին դադարիարախոսութիւն ուղիղվ»:

Այսուեղ «աշխատավորական» ակրեմնը այնքան էլ հաջող չի դործածված՝ երբ խոսքը գրականութեան մասին և, վորովհետեւ աշխատավորակին բարի տակ մենք հասկանում ենք առաջին հերթին գիշացութեան (գոշ-բառարակների), վորը թեև չի շահագործում ուրիշի աշխատանքը, բայց ինքը պրոբլեմատ չե, այլ սոսկ «աշխատավոր գիւղուցիք»: Մենք չենք կարծում, վոր թեկուզ այն պրոլետարական պահաները—Եփրիլով, Ալեքսանդրավսկի, Պամարսկի, Մամարխանիկ, Սաղոֆիեկ ևլ այլն—վորոնց կոչը տպված

և «Մուըրձի» հետց նույն համարում, այդ դասակարգի խղճերի ու ձգութիների արտահայտիչն են ցանկանում լինել: Պրոլետարական պահանջերը—բանվորութեան ապրութիների թարգման են, եվ միայն բանվորութեան: Դիւզացութիւնը—թեկուղ աշխատավոր—վարակված է հիմնավորագոս մեշչանակութեամբ, եվ պրոլետարական պահառ՝ վորպես գերազանցապես քաղաքի ու գործարանի երգիչ խորշում է զիւզական ուժում մթնոլորտից: Առաւ ենք պրոլետարական պահառիա, պրոլետարական պահառ, եվ վհչ երրեք աշխատավորութեան պահառիա, աշխատավորական պահառ, պրոլետարական գրականութիւն, վորովհետեւ միայն պրոլետարական բառն և ճշառութեամբ առաջ մեր դասակարգի գաղափարը: Մի դույզ ջլուտ ձեռքերն են պրոլետարիատի ամբողջ ունեցած-չունեցածը:

Պետք է նկատենք, վոր այս սխալը ի միջի այլոց արվում մն նաև մեր գրական քննազատների կողմից, վորոնք շատ են սիրում գրականութեան մեջ բառ էռթնան վոչինչ չասող «աշխատավորական» խոսքը: Տաղանդավոր նունինին դուցէ կարելի լինի «աշխատավորական» անվանել, թեև կրկնում ենք, այդ անքանականութիւնից պետք է խռոսափել—վորորհետեւ նու կերպարանափոխոված ու հեղափոխված զիւզի (վոր գեռեվո չի նշանակում հեղափոխական զիւզի) մեծ երգին է: Բայց այդ նույն պահան նունինին չի կարելի կոչել պրոլետարական: Ինչպես կիրիլովին կամ Գառանին—կարլ Մարքսը կամ Պուտիլովի զավոզը երդունարին—չի կարելի այլ կերպ կոչել՝ բան պրոլետարական պահաները:

Պրոլետարական Աստուխացիայի նպատակն է իրենց բանվորական պրեզիսն հակաղրել միւս բոլոր դասակարգերի ու խռովերի մատիներին:

Սակայն կարծիքների փոխանակութիւնը այս ինդիքտների շուրջը մեզ հետո կը տանէր: Բավականանք այս մի քանի զիտոզութիւններով, մանավանդ վոր ուղում ենք հավատալ, թե ընկ. Ազատ-Վշառւին այսոնդ ավելի շուտ բարի լարս և թույլ ավել ի-

բեն՝ քան մոռքիւ «Մուրճ»-ի նպատակը և աշխատակիցների ցանկը գոնէ այդ ևն ասում մեզ:

Բանաստեղծական բաժինն ընդհանրապես կարելի է հարուստ համարել Եթէ «ինտելիգենտ պուետները» վորոշ զիսսոնանս չը մտցնեին իրմասց դեկադենտական մոտիվներով, անպայման թերթը ավելի եփս կը շահեր՝ քանի վոր նրան հաջողվել ե մի հարկի տակ ժողովել բանվոր Ալազանի, բանվոր Դանչոր, բանվոր Մուրճանի, բանվոր Վորունու բանաստեղծութիւնները Թող լինեն նրանք զեռեվս անփորձ գրչի արաւորութիւններ, բայց նրանք պատկանում են մեր բանվորին, միջազգային պրոլետարիատի հայ անդամին, վոր փորձում է իրովսանն երգել կոլեկտիվ կեանքը պրոլետարիատի Գետք է նկատենք, վոր բանվորների երգերի մեջ հանդիպում ենք զեղարվեստական բավական պատկերավոր կտորների, վորոնք լուրջ գրավական են, թէ մենք կարող ենք մոռավոր ապազայում սպասել ավելի հաջողված երկեր մեր այդ կարգի բանաստեղծներից: «Մուրճ»-ի անպայման ծառայութիւններից մեկն էլ հենց այն ե, վոր նա հրապարակ է քաշել պրոլետարական պուետների գրեթե մի ամբողջ խմբակ:

Մի այլ, ապագա խոստացող գրիչ-է ընկ. Սիրառը, մեր թերթի գրաշար Սիրասը: Նրա պատմվածքում «Եռացող կաթսուցից», վորը չը գիտենք թէ ինչու «վեպ» է անվանվուծ Սիրասին չի հաջողվել տալ թեկուզ խողադական պատկերը: Ամեն բան կա այս պատմվածքում—Եվ գիւղական լալկանութիւն, եվ ավելորդ բնմական դիալոգ, եվ արագիկ վախճան հերոսներից, վոր իսկապես պետք է կազմեր պատմվածքի տանցքը: Շովանդակութիւնը շատ հին ե.—Հարութ ու կունով մի դիւղացի դալիս և քաղաք եվ քեանակէիր դասուում: Մի օր նու մրսում է, հիմանդանում, գործից ընկնում: Այդ ծանր օրերին մեռնում ե երեխան եվ թաղելու ժամանակ ինքը Հարութիւն ել անշնչանում է: գերեզմանատանը կտոջ ներկայութեամբ: Եթէ հարեվանցիորեն մի տեղ ասված չբլիներ միայն մի նու-

խաղանաւթեամբ, թէ Հարությլ վարձվում և մի ինչպոր անհայտ արհեստանոցում, դժվար կը լիներ հասկանալ, թե ինչ կապ կա հայ գիւղացու և «Եռացող իտթառ» վերնադրի մեջ:

Այս բովանդակութեամբ պատմվածքներ շատ են ավել նաև՝ վճռ՝ պրոլետարական հեղինակութեարք, — թե ինչպիս քաղաքի կեանքը սպանել և իրեն դիմող գիւղացուն Բանվոր Սիրասը—վոր գրաշար և արհեստով և ծանոթ չե գործարանային կեանքի ժխորին—ընականաբար խուսափել և գործարանային կեանքի պատկերից, ինչ շատ սփելի անհրաժեշտ եր, քան գիւղացու մարդ ու կնոջ պառավական խոսակցութիւնը տերաւերի մասին: Գործող տնձինք գիւղացիք են և վոչ թե բանվորներ: Հենց այսուղ և, վոր ոփառք և մնրկրցներ բանվոր Սիրասը պրոլետարական գրչի ինքնահատուկ մոտեցումը թեկուզ այդ հին ու ծեծված նիւթին:

Սիրասի լեզուն բավական սահուն և: Միայն նու պիտք և խուսափի գույների ավելարդ խացումից այսպես, նրա պատմվածքի զլուխները սովորաբար ըսկավում են գրամատիքական նախազգուշացումներով՝ «դեռ լույսը չեր բացվել...», «արևվը բավական բարրաձել եր...», «ծագեց առավոտը...», «երեկոն վրա հասավ. շարագուշակ մութ ու մռայլ գիշերը...», «բավեց լույսը. սեփ ու վշտալից առավոտ», և այլն: Զնայելով այդ «վեպի» բոլոր պակասութիւններին, կրկնում ենք, ընկեր Սիրասը օժամանակից ե, և մենք սպասում ենք նրանից հետաքրքիր հիւղածքներ:

Մի գիտողութիւն ևս Սիրասին: Անպայման կարիք չկար, վոր «Եռացող կաթսայից» պատմվածքը գիւղից—քաղաքի ու գործարանի վրայով—մինչեվ գերեզմանատուն հասցներ: Կարելի եր վերջացնել պատկերը շատ տվելի շուա, օրինակ Հարութիւն և Սուրբիկի հիմանդութեամբ՝ անգործութեան դաժան պայմաններում: Դրանից միայն կը շահեր պատկերը:

Տեսական բաժնում Հայկ Ազատեանը տվել է մի հոդված—«Սոցիալիստական կուլտուրայի շեմքին» վերնագրով: Շոշափիված են շատ հարցեր, բայց ընկեր Հայ-

կի գիտողութիւններն ու եզրակացութիւնները զուրկ չեն հակասութիւններից։ Նա գտնում է, օրինակ, վորերիտաստրդ բանաստեղծութեան զարգացման համար այդ կիսաքաղց ու անգրագետ երկրում չկտ հարկավոր «մթնոլորտը»։ Մեզ թվում է, վոր եթե կոմմունիզմի եվ խորհրդային իշխանութեան համար այդ կիսաքաղց ու անգրագետ երկրում կտապատրաստ մըթնուրտ ընդհանրապես՝ առա եվ պետք է լինի նույն պրոլետարական գրականութեան համար մասնավորապես։ Առաջին տվիալը պայմանավորում է երկրորդը, և կամ պետք է ժխտել երկու հսարավորութիւնները միասին։ Դժվարութիւնները թե գրական եվ թե տնտեսական-քաղաքական ասպարեզներում համապոր են։

Թերթում կա այլ հետաքրքրական նիւթեր։ Թարգմանաբար տրված են Ռուսաստանի պրոլետարական գրողների կոչը, ուղղեկութիւններ նրանց համադումարի մասին։ Թեվել մի փոքր հնացած են այդ նիւթերը—1921 թ.—բայց գրանք անհրաժեշտ եին առաջին Առում։ Հետաքրքիր են Հենրիխ Հեյնեի մասինն փոքրիկ նկատողութիւնները։

Ըստհանրապես տեսութիւնները թողնում ե լավ տպավորութիւն, մանավանդ վոր «Մուրմի» շուրջը համախմբվել են բանվոր-գրողներ, վորոնց կնիքը վորքան ավելի զորեղացնել եվ ավելի տարածել թերթի վրա, ոյնքան նա կը շահի ամեն կողմից։ Նկատելու արժանի և նույնողես ընկ. Աղասի Վշտունու խմբագրական նախաձեռնութիւնը։

ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

«ՊՈԵԶՈԶՈՒԹՅՈՒՆ»

Մասկվա—1922—Էջ 32.

Չարենցը մի տեսրակէի մեջ ժողովել ու տպագրել և Մոսկվայում հաջիվ մեկ ու կես տասնեւակ լանտառեկծութիւններ, վորոնցից մի երկուոր օրինակ «Ազգիկը»—եթէ չենք սխալվում արդմն լույս են տեսել և արդարացնել Հայաստանը օրաթիրթում։

Բանաստեղծութիւնների այս շաբաթ Չարենցի վառըն նոր դափնի չի ավելացնում։ Ընդհակառակը՝ նու շեշտում է, վոր մեր շնորհալի պոեմը ապրում և վորոնումների շրջան և այդ վորոնումների մեջ նա ամելի շուտ կորել ե, քան իր համար պարզել—թեկուզ ընազդով բանաստեղծական—նոր իրավակարգի երդչեւողին։

Ի՞նդիմիկուալիստական բեկումը այս տեսրակի մեջ իրավամբ սպառնական չափեր և ընդունել Չարենցի համար, վոր այսպես թէ այնպես ինքն իրեն համարում ե (և մենք էլ կուզեինք համարել) «կոլեկտուիլի» կամքի ու ձգուամների արտահայտիչ։ Նա չոփազանց հաճախակի և իր տեսրակի մեջ կրկնում։

— Աս

աղուես...

— Եւ ընդզում իր անհոտական հօգեկան փակված առըստենների «գերազանցութիւնը», վորոնք մատչելի չեն նրա շրջառատին։ Նա կարծես ափսառում է, վոր երդում ե՝ քանի վար «գալիք երթը» պետք և անողոք

կերպով անցնի—տունց հասկանալու—և նրա՝ պոեմի վրայով։

Դուք, մարզիկ,
զոր դիաხք կողեկնաց սիրով
ձեր կակուզ որտերը հալել,
լոել էք արեօխի հուր երգը բորք,
երբ տրեմն է—զուսնաչի Ալեք:
Լոել էք... Զեք լոել. չէ:
իսկ ես—ձեր պոհար խոնարհ,
իսկ ես—ձեր պոհար լուսէ,
այդ երգը վոսկերառ
ինչքան եմ լոել...

(Անանուն բանաստեղծութիւնն արես 3—5):

Այս բանաստեղծութիւնը մեղ ապացուցում է,
զոր Զարենցի և մասսայի ձանապարհները շեղվել են
և նրանք իրար չեն հասկանում, կամ ավելի ճիշտ՝
Զարենցը այլեվս չի հասկանում իր շրջադատը։ Ակա-
մա հիշում ես անտլոգիան հնի հետ, երբ բուրժու-
ական պոնտները շեշտում եին՝ պահեի ու ամբոխի—
հասարակական այդ երկու տարբեր կառեզրիաների
փոխադարձ անհասկանալիութիւնը։ մեկի չափազանց
«անհիւթականութիւնը» և միւսի չափազանց նիւթա-
կանութիւնը։ Քանի անդամ և երգված հին ու նոր
դարերուո՞—պոետը կանգնած ոտվորական մահկանա-
ցուներին «անհասանելի» պատվանդանի վրա՝ արհա-
մարհուրեն իրեն ունկնդրող «ամբոխին» ուղղելիս։

Վայ ձեզ, վայ բոլորիդ.
ձեզ, զոր զուրգուրում էք ձեր սիրուը սի.
ի՞նչ շահ ձեր զանգի գհողին
երգերից իմ լույս և լուսէ։

(«Պոեզուունու» երես—5):

Նույն արհամարհանքը զեզի ամբոխի ձաշակը՝
հանձարեղ Պուշկինը երդել և հետեվեալ կերպով. տալիս

Ենք այդ հայտնի երկառողը մոգերն—Մայիսկովովովի-Չարենցի շարվածքով։ Այսպիս կարծես ավելի ազգու է։

Ну

что ж,

печной горшок

тебе

дороже!...

Ты

нишу

в

нем

себе варшиы!...

Այս տրամադրութիւնը Զարենցի տեսրակաւմ անգետ համառութեամբ շարտանակվում և մինչև վերջ Պատմելով վանեցի սրնպի անհաջողութիւնը, մեր պուտը եպրակացնում է։

Քեզ խրառ, պուտ, այստեղից.

ո, երրեր, չերպես անուեղի։

լով է—կորչել անհետ,

լով է—մահը զեղին

թէ ուզեն—նվազիր «Խօնզի».

թէ ուզեն—«Տասնըշորա» և «Տասնըվեց».

միայն թէ, պուտ, կեանքից

սրինզի-ոլես վեր չը թեմինաւ

Ահա այսքան անհուսալի և Երեխանի իրականութիւնը կամ ավելի ճիշտ՝ Զարենցի տրամադրութիւնը՝ Նա ինքը շատ սիրում ու լով հասկանում և «Խօնզին» ու «Տասնըշորա» և այսուեղից եղբակացնում, թէ նրա շրջապատը շի կարող ուրիմ այլ երդ ունենալ քան նույն մեղեդիները...

Վարտեղ են այդպիսի հոռեանութեան արմատները։ «Երեքի» դեկլարացիայի մեջ, թէ «մարքսիստական» այն տուրնիրի, վոր առատորեն շւայլից վահան Տերեխանի անվան շուրջը։ Ինչու, ինչու միայն Զարենցն և իրեն վերապահում սրնպի գեղեցկութիւնը հաշակելու ունակութեան արտօնութիւնը եվ այդքան

արհամարհում և եվ Հադոին, Եվ Մգոին, Եվ Քիթլիսցի
Փիլոսին կամ Ալաշկերտցի Սիրասին Նա մռացել է
պոետի սպառնական խոսքերը.

Եվ դուք չըգիտեք
միթէ,
վոր ամեն մի գրառաւ
Դարօ,
կամ ուրիշ մի
թաթու,
Մարգար
կամ Եղօ, կամ Համալ
Սեթօ—
իր խօնավ թոքերում ունի
բիւր Տերեան
ու վերլին
ու Պօ...
Իսկ մենք կավելացնեինք—
եվ Եղիշէ
ու Չարենց!...

Այդպիսի թիւր կարծիք ունենալով անհատի
կարողութեան, մասնավորապես պոետի, Չարենցը բնա-
կանաբար իրեն վերագրում է (ինչպես բոլոր ժո-
մանակների բուրժուական պոետները վերագրել են)
գերմարդկային անտեղի ինչ-վոր ույժ.

Ինձ համար ինչ կա, վոր չկա.
կանեմ ինչ վոր կամքո ջնկի:
Ուզում էք՝ դարձնեմ «Չեկա»
Թաղանթի սկս քնքույշ հողիս!...
Բայց ինչ, ինչ դրանից...
միեվնույն է՝ սիրոս կիշնի
ձանձրույթը, վորպես որանիտ
ու թափիծը՝ սկազ ու դժմի:

Պարզ ե, վոր այս տաղերի մեջ բանվոր դասա-
կարդի ռաեղծագործական հանճարի ամենակարողու-

թիւնը չե, վոր երգվաւծ ե, թեեվ այս ղեղքում էլ
մեզ համար տարարինակ կըլլիներ այն անուեղի
քնքշութիւնը, վոր կուզեր Զարենցը տեսնել անցնող շըր-
ջունում մարտական պլուխտարիատի հոգում: Բայց
այսակդ կոլեկտօնի առկրում չկա—այլ ամենա Զարենցի-
կոմ Արենցի, նրա այս կոմ այն՝ մեզ համար շառ
քիչ հասարակական արժեք ունեցող մանենափի, վորին
կարող և հատուկ լինել եվ ձանձրույթ, եվ թափիծ,
եվ լքում, այսքան հետաքրքիր ժամանակաշրջանում
բոկ:

Պասիմիկմին ու երազկուառոթիւնը Երկրվորեակներ
են. եթէ մեկը ճըշտ, միւսը անսպայման պիտի ձայ-
նուկցի: Եվ Զարենցի այդ տեսրակի մեջ այդ երկու
զդացմունքները վորուս մի շղթա, սերտորեն իրար
մեջ ողակված են.

Իմ հեռու, խուլ աշխարհից
ահա ևս հին մի պուռա,
տեսնում եմ հեռուները հիր,
վորովս նոր մի Ռուբէրտ Օուեն:

(Շոգեգալուստ, Երևա—25)

Վորովս մի նին սյուս թէ ինչպէս և նու կարողանում
տեսնել «վորովս նոր մի Օվեն» զալիք օրերը, զա ընկ. Զարենցի երեմակայութեան զաղտոնիքն եւ Բայց միթէ
զեւեզր մեր կեանքը երազների մի հիւսվածք և եվ
առողջան այնքան հանելուկային... Եվ եթէ մենք ու-
զում ենք նախատեսել վաղվան օրը, պետք և անձնա-
տուր լինենք ուստօղիսաների զառանցքներին...: Զենք
կարծում, թէ ներկա զեսպրում բավարարվուծ և Մարքսի
«աշակերտը»—ընկ. Զարենցը... Օվենի աչքերով չեն
նայում այլիքս ներկայումս զալիք օրերին, այլ լինեւ
Լենինի կոմ լուդ Թըրզոնի, եթէ անզպայման Զարենցին
հարկավոր և անզլիական կեանքից օրինակ բերել
«Ամսպից» եվ «Տաննըչորսից» դենը բան չը հասկացող
երեմանցուն...

Զարենցը ճիշտ չե պատկերոցնում նաև այն

խոշոր անցքերի դերակատարներին, վորոնք շրջապատում են նրան և լորոնց նա երբեմն փորձում է երգել։ Հոկտեմբերեան հեղափոխութեան դործոն տարրը՝ բանվորութեան ավանդարդն եր, ողողետարիատի գիտակից ու հեղափոխական շերտը։ Զարենցը երբ երգում է շարժուն կոլեկտիվը—նա երգում է ամրոխը կամ ավելի ճիշտ՝ այդ ամրոխի ամենից անդիտակ ու մռւթ խավը։ Նրա մուսայի վոգեվորութեան աղբիւրը՝ յումպեն պրոլետարիատն է, դեկլասէ եղած գաղթականութիւնը, վորի մոջիներից զուր և փորձում մեր նոր Օվենը ծնեցնել տալ հեղ հիսուսներ։

Հասկանում է՞ եկավ, քոսոտ,
քորելով մեջքը վաստակած
եվ բերեց աչքերում մի բոսոր,
արնածոր որոշ հաղթական։

Եւ գիտեք՝ թափով թիկնեղ՝
երբ համնի նա Հինդ ու Զիլի
ովհտի բիւր Հիսուսնոր ծնեն
նրա մէկ, մէկ ուստիլից!...

Մեզ համար Հիսուսը իհարկէ դործչի իրիալ չեւ և վճէ էլ նրա վարդապետութիւնը ընդորինակելիի Բայց և այնպես չենք կարծում թէ վոջիլից մեր ժամանակ-ները նույնիսկ պասոխվութեան հետեւրդներ ծնեն, եթէ նա—այդ վոջիլների վոհմակը շարժվի տեղից։ Խավար դաղթականութիւնը Հայաստանում արտադրեց Կարօ-Սասունիներ, Սեպուհներ, անաբույս «փաշաներ» և ընդհանուրապես խմբապետականութիւնը, վորը ի միջի այլոց 1920 թ. արեան մեջ խեղդեց այն շարժումը, վոր անխուսափելիորեն պետք է հաղթանակեր մի տարի հետո։

Եվրոպայում լումպեն-պրոլետարիատը ծնեց Գաշիղմ և վոջիլը հենց Մուսուլմնիւ

Միթէ Զարենցը մոռացել է ընկ. Տրոցկու պատմական սքանչելի համաններից մեկը։

— Վոջիլը Խորհրդային իշխանութեան ամենակառաղի թշնամին է...

Ի հարկէ Տըռցկու աշխ խոսքը միայն բառացի նշանակութիւն չունիր Բայց Զարենցի դիտող աչքից վրիպել է այդ տողերի թէ բառացի և թէ փոխարերական իմաստը:

Եգրակացութիւն.—Երիտասարդ պոետ Զարենցը բավական խորթացել և պրոլետար մկան ստեղծագործութեանը Լողալով Երեվանի և Մոռկվայի մեջ, գրական ընդհանուր վորոնում-շվոթի մեջ կորցնելով իր գլուխը և պարզ չը պատկերացնելով պրոլետար մկան արվեստի տնդը; Զարեցը տպրում և—ինչպես շատ և շատ անկազմակերպ հայ պոետներ—պրադտումների, և խարիսափումների անցողական շրջան, վօրի այս կամ այն կերպ լուծումը պարզելու և նրա տեղը մեր նորագույն բանաստեղծութեան մեջ:

Մենք անկեղծ կերպով կը ցանկանայիք, վոր նրա անրքին ճգնաժամը լուծվեր հոգուտ պրոլետարիատի, վորովհետեւ Զարենցը հարկավոր ույժ և և մեզ ցավ կը պատճառեր, եթէ նա մեղ հետ չը լիներ, եթէ նա խպառ դագարեր բանվոր դաստկարդի երգիչը լինելուց:

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ո Ւ Ա

(Հրատարակչութիւններ՝ «Սոցիալիստական հրաժ.», «Երևանի Խնմերնացիոնալ», «Գրալեսկուլտ», «Պրոլետարյան միստ», «Երիտա», «Կոմմոնինսի գրադարան», «Կունյառանցանարքի գրադարան», «Բանվորության գրադարան», «Պրոֆեսիոնալ գրադարան», «Սարգս-Մարտ» եւ այլն)

Լ Հ Ա Յ Ե Բ Ի Ե Լ Ե Զ Գ Վ Ա Գ

1. Կորլ Մարքսի հիշատակին
2. Ե. Առորէն—Բանվորի պիրոր
3. «Բանվոր» ամսագիր № 1
4. «Բանվոր» ամսագիր № 2
5. Պոլ Լաֆարդ — Դեզի ոսցիալիզմի թագավարութիւնը
6. Ֆր. Էնդելու—Կոմմոնինսիլի սկզբունքները
7. Ն. Բուխարին — Կոմմոնինսիստների (բոլշևիկների) ծրագիրը
8. Ե. Ստելլանով—Ժան Պոլ Մարտու
9. Ն. Լենին—Բուրժուական և պրոլետարյական զիմոլոգիան
10. Ն. Լենին—Միջին պիուղացութեան մտանին
11. Կոմմոնինստական կուսակցութեան ծրագիրը
12. Կոմմոնինստական Ինտերնացիոնալի մանիֆեստը
13. Կոմմոնինստական Ինտերնացիոնալի պլատֆորման
14. Մ. Փորկիյ—Ժողովրդին և ինտելիգենցիային
15. Ա. Լունաչարյակի—Հեղափոխութիւնը և դատարանը
16. Ստալին—Խորհրդային իշխանութեան ազգային քաղաքականութիւնը
17. Պրովետարական պոնդիստ
18. «Երինա» (Երրորդ Բառերնաց.) ժողովածու, ակար I
19. «Երինա» ժողովածու, ակար II
20. «Երինա» ժողովածու, ակար III
21. Երրորդ Ինտերնացիոնալի կանոնադրութիւնը

22. Լոռվայ Նեյտրալ դոնի գիւղացիական որատգումավորմանը իսորհղի (1919 թ.) արձանագրութիւնները, զիրք I
23. Լոռվայ Նեյտ. դոնի գիւղացիական իսորհղի (1920 թ.) արձանագրութիւնները—զիրք II
24. Ա. Մարտունի—Երրարդ կոմմունիստական Խսաներացիոնալը
25. Կոմմունիստական Խստերնացիոնալ—ժողովածու
26. Ն. Շուխարին և է. Պրեոբրաժնովիչ—Կոմմունիզմի այլուրինը
27. Ն. Լենին—«Զախութեան» Երեխայական հիմանգութիւնը կոմմունիզմի մէջ
28. Վ. Կերժենցիև—Մայիսի 1-ը և համաշխարհային հեղափոխութիւնը
29. Վ. Նեվսկի—Վ. Ի. Ռելիանով-Լենին
30. Գիւղատնտեսական կոմունաներ
31. Գիւղում աշխատելու հրահանդներ
32. Բլոնինա—Բանվորութիւնները Խստերնացիոնալի մէջ
33. Ա. Կալանտայ — Էնտունիքը և կոմմունիստական պետութիւնը
34. Ն. Լենին—Խորհրդային իշխանութիւնը և բանվորութիւն
35. Պրոֆմիութիւնների ժ-րդ Համառուսական համարումարի բանաձենները և վորոշումնելը
36. Կոմմունիստական կուսակցութեան ծրագիրը—2-րդ տպագր.
37. Հ. Հակոբեան—Կարմիր ալիք
38. «Լոռվա գիւղացութեան ձայնը» № № 1, 2, 3, 4, 5
39. «Կարմիր Ասազ» № № 1, 2, 3, 4, 5. (մենշեվիկների օրոք)
40. «Կարմիր Բանչպար» № № 1, 2, 3
41. «Կարմիր օրեր» № № 1, 2, 3, 4, 5, 6
42. «Արևմտահայ բանվոր-գիւղացութիւն» № № 1, 2
43. «Արեվմտահայ Զայն» № 1
44. Ե. Սուրէն—Գրական-քննական հոդվածներ

Ա Վ Բ Ա Տ Ե Բ Ռ Է Ն Լ Ե Զ Վ Ո Վ

45. Կոմմունիստական Խստերնացիոնալի մանիֆեստը
46. Կոմմունիստական Խստերնացիոնալի պլատֆորման


47. Ն. Անդրեասյան — Բուրժուական և պրոլետարական գիտակրամքան
48. Հողի մասին (թեզիաներ)
49. Պրոլետարական որեզիա

III. ԹԻՒՐԹԵԼՐՆ ԼԵԶՎՈՎ

- 50) Կամացնիսական Բառերնացինալի ոլուսափորման

IV. ՌԱԿԱԲԵԼՔՆ ԼԵԶՎՈՎ

51. Пролетарское творчество
52. Пролетарская культура I
53. Пролетарская культура II
54. Пролетарская культура III
55. Народное хозяйство I
56. Народное хозяйство II
57. Трудовая школа
58. Вестник труда
59. Советская медицина
60. Пролетарская поэзия—2-ое изд.
61. Н. Ленин—Буржуазная и пролетар. демократия
62. П. Степанов—От рабочего контроля к рабочему управлению
63. Г. Устинов—Меньшевики, эс-эры и контрреволюция
64. Н. Ленин—О среднем крестьянстве
65. А. Луначарский—Революция и суд
66. М. Горький—Народу и интеллигенции
67. Н. Бухарин—Программа коммунистов (большевиков)
68. Н. Ленин—Письмо к американск. рабочим
69. Манифест Коммунистического Интернационала
70. Платформа Коммунистическ. Интернационала
71. Н. Осиповский—О едином революционном фронте
72. П. Стучка—Новый суд
73. Н. Осиповский—Предпосылки социалистической революции



Տ Ա Ր Ա Յ Ո Ւ Մ Լ Ո Ւ Յ Ա Կ Ե Տ Ե Ս Ն Ի Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Ե. Ս Ո Ւ Ր Ե Ն Ի

Հ Օ Կ Տ Ե Մ Բ Ե Ր *



ա կ ա ն - մ ե ղ ա ր վ ե ս տ կ ա ն ա մ ս տ գ ի ւ

Շ Ո Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Բ

Հ ր ա ս տ ա ն ի Կ ո մ մ ո ւ հ ս տ ա կ ա ն Պ ո ս ա կ ց ու թ ե ա ն

Կ Ա Ր Մ Ի Ք Ա Վ Տ Վ *

Օ Ր Ա Թ Ե Ր Թ Ի

Հ ա յ է ն Տ ի ֆ լ ի ս, Կ ր ա զ ե ն ի տ ե ր դ ս կ ա, 4.


Պ Ա Տ Ր Ա Ա Տ Է Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Ե. Ս Ո Ւ Ր Ե Ն Ի


Ց Ի Ա Լ Ի Ս Տ Ա Կ Ա Ն

Հ Ա Կ Ա - Հ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Բ
Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ս Ս Ո Ւ Մ

(804)



10 m²



ଓଡ଼ିଆ ଲେଖକ ପର୍ମି ଶ୍ରୀ



220031235

H 31235